«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ
ք. Ստեփանակերտ,
Վ. Սարգսյան 25ա
հեռ. (+374 47) 95 35 42,
(+374 47) 94 28 58
ֆաքս. (+374 47) 97 42 14

ARTSAKH HEK OJSC
Stepanakert,
25ª, V. Sargsyan str.
tel.: (+374 47) 95 35 42,
(+374 47) 94 28 58
fax.: (+374 47) 97 42 14

ОАО "АРЦАХ ГЭК"
г. Степанакерт,
ул. В. Саркисяна 25ª,
тел. (+374 47) 95 35 42,
(+374 47) 94 28 58
факс. (+374 47) 97 42 14

№ _____ «___ _____20___թ.

ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ
ՈՐՈՇՈՒՄ N 6-2018/01

«14» նոյեմբերի 2018թ. ք.Ստեփանակերտ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկորությունների մասին» Արցախի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածի առաջին մասի «զ» ենթակետը, «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության կանոնադրության 12.5 կետի ա) ենթակետը և «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի 14.11.2018թ. նիստի 06-2018թ. արձանագրությունը, ինչպես նաև ելնելով «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության գործունեության զարգացման անհրաժեշտությունից՝ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության Տնօրենների խորհուրդը որոշում է՝

1. Լրացուցիչ տեղաբաշխել 1 350 000 000 (մեկ միլիարդ երեք հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով, 1 350 000 (մեկ միլիոն երեք հարյուր հիսուն հազար) հատ, 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով ոչ փաստաթղթային հասարակ անվանական բաժնետոմսեր:

2. Հաստատել «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի անվանական արժեքով ոչ փաստաթղթային հասարակ անվանական բաժնետոմսերի տեղաբաշխման պայմանները՝ համաձայն հավելվածի:

3. Բաժնետոմսերի տեղաբաշխման ընթացքում ապահովել բաժնետոմսերի սեփականատերերի նախապատվության իրավունքի կիրառումը՝ հավելվածով սահմանված պայմաններին համապատասխան:

4. Հանձնարարել «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ գլխավոր տնօրենին ապահովել բաժնետոմսերը տեղաբաշխման նախապատրաստական աշխատանքների իրականացումը, այդ թվում՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձի (Արմսվիսբանկ ՓԲԸ) հետ «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման կազմակերպման նպատակով համապատասխան պայմանագրի կնքումը, բաժնետոմսերի ազդագրի մշակումը և ՀՀ կենտրոնական բանկում օրենքով սահմանված կարգով գրանցումը, տեղաբաշխման ենթակա բաժնետոմսերի տեղաբաշխմանն առնչվող այլ գործողությունների իրականացումը:

5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2018 թվականի նոյեմբերի 14-ից:

Գլխավոր տնօրեն Վ. Բեգլարյան